Խաբել են նաև ՏՄՊՊՀ նախագահին

Ցորենի տեղափոխման սակագինը չի բարձրացել

Բեռնափոխադրող ընկերությունները վարմացած են Շաբոյանի հայտարարությունից, թե բեռնափոխադրողները բարձրացրել են իրենց ծառայությունների գները:

Հայաստանի ցորենի ալյուրի շուկայում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտները գների բարձրացումը հիմնավորելու նպատակով թյուր տեղեկություններ են տրամադրել ոչ միայն գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանին, այլև Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանին: Որպես պատճառաբանություն նրանք բերել են բեռնափոխադրման սակագների բարձրացումը, մինչդեռ բեռնափոխադրողները հերքում են սակագների բարձրացման փաստը:

Երեկ ՏՄՊՊՀ նիստից հետո Արտակ Շաբոյանը լրագրողներին հայտարարեց, որ հարևան երկրների հետ համեմատած՝ ալյուրն այսօր Հայաստանում վաճառվում է ամենացածր գնով: Այսօր, ըստ նրա, Հայաստանում բարձրորակ ալյուրի 1 կգ-ն արժե ոչ ավելի, քան դ200: Նրա տվյալներով՝ ալյուրի ու հացահատիկի միջազգային գները շարունակում են բարձր մնալ: Եվրոպայում հացահատիկի 1 տոննան արժե մինչև $300, Ուկրաինայում՝ $320: (Ա. Շաբոյանի տեղեկությունները տարբերվում են հարևան երկրների լրատվամիջոցների տեղեկություններից: Այսպես, ըստ ադրբեջանական մամուլի, Ադրբեջանում մեկ պարկ ալյուրը (50 կգ), կախված տեսակից, վաճառվում է $20-$23, կամ 1 կգ-ը դ146-դ168-ով, Վրաստանում բարձր տեսակի ալյուրի 1 պարկն արժե 48 լարի ($26), կամ 1 կգ-ը դ186):

Շաբոյանն ասաց, որ ՏՄՊՊՀ-ն հուլիսին ալյուրի ու հացահատիկի շուկայում սկսել է գների մոնիտորինգ իրականացնել, քանի որ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի՝ հացահատիկի արտահանումը արգելող հայտարարությունից հետո հայ ներմուծողները և բեռնափոխադրողները բարձրացրել են իրենց ծառայությունների գները: «Այդ հարցը մեկ անգամ չէ, որ քննարկել ենք ինչպես տեղական տնտեսավարող սուբյեկտների՝ ներկրողների, այնպես էլ ռուս գործընկերների հետ, և այդ խնդիրը մնում է մեր ուշադրության կենտրոնում»,- ասաց նա՝ հավելելով, թե ալյուրի գները կտրուկ բարձրացել են հուլիսին, իսկ մոնիտորինգից ու հանձնաժողովում տեղի ունեցած քննարկումներից հետո գրանցվել է 20% անկում:

>> էջ 5

Խաբել են նաև ՏՄՊՊՀ նախագահին

Ցորենի տեղափոխման սակագինը չի բարձրացել

սկիզբը՝ << էջ 1

Նշենք, որ բեռնափոխադրող ընկերությունները վարմացած են Շաբոյանի հայտարարությունից, թե բեռնափոխադրողները բարձրացրել են իրենց ծառայությունների գները: Հայաստանի խոշորագույն բեռնափոխադրող «Ապավեն» ընկերության գործադիր տնօրեն Էդուարդ Աղաջանյանը «Կապիտալին» ասաց, որ Հայաստան ներկրվող հացահատիկի, ինչպես և վառելիքի գրեթե ողջ ծավալը իրականացվում է երկաթուղով: «Այս ժամանակահատվածում «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունում սակագների փոփոխություն տեղի չի ունեցել, հետևաբար հացահատիկի տեղափոխման սակագների փոփոխություն չի եղել»,- ասաց Աղաջանյանը:

Ցորենի ալյուրի շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող «Ալեքս Գրիգ» ընկերության տնօրեն Մհեր Ղարիբյանը «Կապիտալին» տեղեկացրեց, որ բեռնափոխադրման սակագների էական աճ տեղի չի ունեցել: Ըստ նրա՝ վերջերս 1 տոննա բեռի տեղափոխման սակագինը բարձրացել է ընդամենը $2-ով, ինչը ոչ թե սակագների վերանայման, այլ շվեյցարական ֆրանկի փոխարժեքի տատանման արդյունքն է:

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության մամուլի քարտուղար Վահե Դավթյանը նույնպես «Կապիտալին» տեղեկացրեց, որ իրենք սակագների էական բարձրացում չեն կատարել: Ըստ նրա՝ շվեյցարական ֆրանկի փոխարժեքի փոփոխության արդյունքում հուլիսի 1-ին տեղի է ունեցել բեռնափոխադրման սակագների ինդեքսացիա 2,47%-ով: Այսօր ունիվերսալ վագոնով 1 տոննա բեռի տեղափոխման սակագինը Այրում կայարանից Երևան կազմում է դ5628, իսկ մինչև հուլիսի 1-ը սակագինը կազմում էր դ5 505:

Ակնհայտ է, որ բեռնափոխադրման սակագնի այսպիսի փոփոխությունը չէր կարող հանգեցնել ալյուրի և հացի գների վերանայման:

Նշենք, որ օգոստոսի 30-ին գյուղնախարար Գերասիմ Ալավերդյանը հայտարարել էր («Կապիտալ», թիվ 153, 31.08.2010թ.), որ Այրումից Երևան բեռնափոխադրումների 1 տոննայի ինքնարժեքը $8-ից հասել է մինչև $30: Նախարարին այդ տեղեկությունը հայտնել էին ցորենի շուկայում գործունեություն ծավալող ընկերությունները:

Արմենակ Չատինյան